ՄԱՐՈՒԹ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

20-րդ դարի վերջում և 21-րդ դարի սկզբներին աշխարհում ընթացող գործընթացները էական փոփոխություններ մտցրեցին մի շարք երկրների (այդ թվում նաև Հայաստանի) քաղաքական, տնտեսական ու աշխարհաքաղաքական կարգավիճակում: Զգալի չափով նվազեց պետության, հասարակության և անհատի անվտանգությունը: Խնդրի բարդությունը կայանում է նրանում, որ ոչ միայն պետք է ապահովել պետության անվտանգությունը, այլև այն կառուցել միանգամայն որակական նոր իրավիճակում:

Երբեմն որոշ քաղաքական գործիչներ «ազգային անվտանգությունը» նույնացնում են «պետական անվտանգություն» հասկացության հետ, որը ճիշտ չէ: Ի համեմատություն պետական անվտանգության ազգային անվտանգությունը առավել լայն հասկացություն է: Պետական անվտանգությունը կոչված է ապահովելու պետական գործունեության տարբեր բնագավառներ, իսկ ազգային անվտանգությունը կոնկրետ էթնոսի գոյության անվտանգության և կենսագործունեության ապահովումն է: Հետևաբար, օրինակ, այնպիսի բնագավառ, ինչպիսին էկոլոգիական անվտանգությունն է, չի ընդգրկվում «պետական անվտանգություն» հասկացության շրջանակներում:

Առավել ընդունված է տարբերակել «անվտանգություն» հասկացության երկու այլընտրանքային տարբերակ:

Առաջին տարբերակի համաձայն հասարակության անվտանգությունը ապահովված է, եթե քաղաքացիական հասարակության ելակետային միավոր՝ անհատի անվտանգությունը խաթարված չէ: Նման մոտեցման դեպքում անհատի ազատությունը դիտարկվում է որպես բարձրագույն արժեք, որից բխում են նաև հասարակական այլ արժեքները (քաղաքական, կրոնական, բարոյական և այլն): Այս տարբերակը լայն տարածում ունի հատկապես ժամանակակից արևմտյան հասարակությունում:

Երկրորդ տարբերակում գլխավոր արժեքը ոչ թե մեկուսացված, ներպարփակված հնդիվիդումն է, այլ կոլեկտիվի բաղկացուցիչ մաս կազմող անհատը:[1] Ինչպես խորհրդային ժամանակներում, այնպես էլ հիմա տարածված է այն տեսակետը, որ բացի պետականից այլ ոչ մի տեսակի շահեր գոյություն

[1] А.П. Кочетков, Стратегия национальной безопасности, М, 2001, էջ 5:

չունեն (կամ անտեսվում է): Անձնական շահերի անտեսումը խոչընդոտում է հասարակության սոցիալ-քաղաքական և տնտեսական զարգացմանը:

Անհատի, հասարակության և պետության անվտանգության ապահովման համար գործունեությունը որպես սոցիալական ֆենոմեն առաջանում է սոցիալական ինդիվիդումի, սոցիալական խմբի և հասարակության միջև հակասությունների լուծման ընթացքում: Անվտանգության ապահովման համար իրականացված գործունեության օբյեկտը՝ վտանգն է, իսկ գործունեության առարկան վտանգի կոնկրետ դրսևորումները (ռազմական, քաղաքական, տնտեսական և այլն): Ելնելով այս հանգամանքից անվտանգության ապահովման ուղղությամբ գործողությունները կարելի է պատկերել ուղղահայաց երեք հարթությամբ՝

1. Անհատի անվտանգության ապահովում
2. Հասարակության անվտանգության ապահովում
3. Պետության անվտանգության ապահովում:[2]

Անվտանգության համակարգի հորիզոնական մակարդակը կարող է իր հերթին առանձնացվել, ինչպես օրինակ, քաղաքական, ռազմական, ինֆորմացիոն, գիտատեխնիկական անվտանգություն և այլն:

Ժամանակակից մի շարք հեղինակների մոտ «անվտանգություն» կատեգորիան դասակարգվում է հետևյալ սկզբունքներով.

Ըստ իրենց մասշտաբայնության՝

ա) միջազգային գլոբալ անվտանգություն

բ) միջազգային տարածաշրջանային անվտանգություն

գ) ազգային անվտանգություն

դ) տեղային անվտանգություն

Ազգային անվտանգությունը իր հերթին տարբերակվում է

ա) պետական անվտանգության

բ) տարածաշրջանային (լոկալ) անվտանգության

գ) մասնավոր (անհատի և տարբեր տնտեսվարող և հասարակական կազմակերպություններ) անվտանգություն:[3]

Երբեմն վտանգի առավել բարդ դրսևորումները պատկերելու համար դրանք զուգակցում կամ համակցում են: Օրինակ, ազգային անվտանգություն հասկացությունը բնութագրում է պետության պաշտպանվածության աստիճանը և իր մեջ որպես հիմնական տարրեր ներառում է տնտեսական, սոցիալական, բնապահպանական, ֆինանսական, ռեսուրսային, ինֆորմացիոն, միջուկային անվտանգությունը: Այստեղից պարզ է, որ ազգային անվտանգություն հասկացությունը իր մեջ ներառում է մի շարք այլ «մասնավոր» բնույթի անվտան

---

[2] Экономическая и национальная безопасность., М, 2004, էջ 15:
[3] Նույն տեղում, էջ 17:

գության տարրեր, որը հնարավորություն է տալիս ավելի բազմակողմանի ձևով գնահատել պետական շահերի պաշտպանվածության աստիճանը ոչ միայն առանձին-առանձին տարբեր սպառնալիքներից, այլև նրանց համատեղ դրսևորման դեպքում:[4]

Այսպիսով, ազգային անվտանգությունը բազմաշերտ և բարդ ֆունկցիոնալ համակարգ է, որտեղ մշտապես փոխվում և հակազդում են անհատի, հասարակության, պետության կենսական շահերը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին վտանգների հետ:

Հարկավոր է տարբերակել նաև ազգային անվտանգություն և ազգային անվտանգության ապահովման համակարգերը: Դրանցից առաջինը ֆունկցիոնալ համակարգ է, որը արտացոլում է շահերի և վտանգների (սպառնալիքների) փոխազդեցության գործընթացները, իսկ երկրորդը՝ կազմակերպչական համակարգ է, որը կոչված է լուծելու ազգային անվտանգության ապահովման խնդիրները տարբեր մարմինների, ուժերի, միջոցների, կազմակերպությունների միջոցով:[5]

Ազգային անվտանգություն հասկացությունը առաջին անգամ տեղ է գտել 1904թ. ԱՄՆ Կոնգրեսին ուղղված Նախագահ Թեոդոր Ռուզվելտի ուղերձում (վերաբերվում էր Պանամայի կառուցվելիք ջրանցքի տարածքում ռազմական գործողություններին): Հետագա տարիներին այդ խնդիրը դարձավ ամերիկյան քաղաքագետների ուսումնասիրության առարկան:

Երբեմն վտանգի աստիճանը գնահատելու և առավել բարդ երևույթները պատկերելու համար օգտագործում են անվտանգության կոմբինացված կամ պայմանական հասկացությունը, որի վառ օրինակներից է ազգային անվտանգության հասկացությունը, որը բնութագրում է պետության պաշտպանվածության աստիճանը և իր մեջ ներառում է որպես հիմնական տարրեր տնտեսական, սոցիալական, բնապահպանական, ֆինանսական, ռեսուրսային, միջուկային, ինֆորմացիոն անվտանգությունը: Այսպիսով, ազգային անվտանգությունը ներառում է անվտանգության տարբեր բնագավառներ, որը հնարավորություն է տալիս առավել բազմակողմանի գնահատել պետական շահերի պաշտպանվածության աստիճանը ոչ միայն առանձին վտանգներից, այլև նրանց միասնական հանդես գալու դեպքում:

Ազգային անվտանգությունը սերտորեն կապված է պետությունների ազգային շահերի հետ, որը ընդգրկում է ոչ միայն տվյալ պետության, այլև նրա սահմաններից դուրս գտնվող այլ տարածքներ: Այս կամ այն պետության արտաքին քաղաքականությունը որոշվում է մի շարք գործոններով՝ այդ թվում

---

[4] Экономическая и национальная безопасность., էջ 18:
[5] Նույն տեղում, էջ 24:

սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական, աշխարհագրական դիրքի, ազգային-պատմական սովորույթների, ինքնիշխանության և անվտանգության ապահովման պահանջների և այլն: Թվարկված բոլոր գործոնների կենտրոնացումը արտաքին քաղաքականությունում ներառում է ազգային շահի հասկացությունը: Այն առաջին անգամ օգտագործվել է 1935թ. հրատարակված սոցիալական գիտությունների Օքսֆորդյան հանրագիտարանում: Այս ուղղության առաջնայնությունը պատկանում է ամերիկյան գիտնականներ Ռ. Նիբուրն և պատմաբան Չ. Բիրդին: Այս հիմնախնդրի նկատմամբ հետաքրքրությունը մեծացավ հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Այն առավել բազմակողմանի լուսաբանվեց 1948թ. լույս տեսած Հ. Մորգենթաուի «Ազգային շահի պաշտպանությունը» աշխատությունում:[6]

Ազգային անվտանգության ապահովումը ենթադրում է գործունեության ուրույն մեթոդներ, մեխանիզմներ, միջոցներ և այդ նպատակով ստեղծված առանձնահատուկ մարմիններ: Յուրաքանչյուր երկրի համար ազգային շահերը օբյեկտիվ գործոն է, որը պայմանավորված է նրա կենսագործունեության պայմանների ամբողջությամբ: Նրա բովանդակությամբ է թելադրված, թե ինչպիսի քաղաքականություն պետք է վարի տվյալ պետությունը, որպեսզի ապահովի իր տարածքի ամբողջականությունը, քաղաքացիների բարեկեցությունը, ինչպես նաև աշխարհի իր համար կարևոր շրջաններում ապահովի իր շահերը: Այսինքն կարող են նշել, որ ազգային շահը՝ տվյալ ազգի հասարակական-քաղաքական ինստիտուտների, նյութական և հոգևոր արժեքների խտացված արտահայտությունն է:

Տարածական-աշխարհագրական առումով ազգային շահը չի կարող սահմանափակվել մեկ պետության շրջանակներում: Այն գործընթացները, որ ընթանում են աշխարհում ու տվյալ տարածաշրջանում, կարող են ուղղակի ձևով ազդել այդ պետությունների զարգացման հեռանկարների վրա: Այս կապակցությամբ տարբերակում են ներքին և արտաքին անվտանգություն: Արտաքին անվտանգության ապահովման համար կարևոր նշանակություն ունի աշխարհում տվյալ երկրի (ազգի) տեղի ու դերի մասին պատկերացումները:

Ազգային անվտանգության առարկան՝ սոցիալական, բնական-բնապահպանական և տեխնոգեն-արտադրական վտանգի հետևանքով օբյեկտիվորեն առաջացած օրինաչափությունների և վտանգի չեզոքացումն է:

Ազգային շահերի պաշտպանությունը պետությունը իրականացնում է ազգային անվտանգության հայեցակարգով մշակված գործողությունների միջոցով:

Ազգային անվտանգության համակարգը՝ պետության կողմից հատուկ ստեղծված և կոնստիտուացված իրավական նորմերի, օրենսդրական և գործա-

---

[6] К.С. Гаджиев. Введение в геополитику, М, 1998, էջ 349:

դիր մարմինների միասնականությունն է, որը ներառում է նաև ազգային շահերի հուսալի պաշտպանության ապահովում և այդ ուղղությամբ նրանց գործունեության ուղղությունների և մեթոդների կիրառում:[7]

Ազգային անվտանգության արդյունավետությունը մեծանում է, եթե ընդհանուր շերտեր են հայտնվում անվտանգության համաշխարհային և տարածաշրջանային համակարգերի միջև:

Ազգային անվտանգության օբյեկտները՝ իրավական գոյություն ունեցող երևույթները, գործընթացները և հարաբերություններն են, որոնց պաշտպանությունն է անվտանգության հիմնական բովանդակությունը և ռազմավարական նպատակը: Ազգային անվտանգության օբյեկտները մի շարք երկրներում ընդունված օրենքներով սահմանված է անհատը (մարդը) իր իրավունքներով ու ազատություններով, հասարակությունը նյութական ու հոգևոր արժեքներով, պետությունը սահմանադրական կարգով, ինքնիշխանությամբ և տարածքային ամբողջականությամբ, իսկ ազգային անվտանգության սուբյեկտներն են պետությունը օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների համակարգով, կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, տեղական ինքնակառավարման մարմինները, քաղաքացիները:[8]

Մեր օրերում խոսելով պետության անվտանգության մասին հարկավոր է նկատի ունենալ նաև մեկ կարևոր հանգամանք: Եթե մինչև XX դ. կեսերը աշխարհի տարբեր պետությունները հոգ էին տանում միայն իրենց սեփական անվտանգության մասին և դեռ ավելին, իրենց անվտանգությունը ապահովելու համար աշխատում էին ռազմական գերակշռություն ստանալ մրցակցի նկատմամբ, ապա ներկայումս, ցանկացած պետության անվտանգությունը գնալով ավելի քիչ է կախված նրա ունեցած զինանոցից և ավելի շատ՝ տարածաշրջանում տիրող միջազգային հարաբերությունների որակից: Միջազգային հարաբերությունների կայունությունը ապահովվում է բացասական երևույթների նկատմամբ քաղաքական, ռազմական, տնտեսական, բնապահպանական, հումանիտար և մի շարք այլ բնագավառների համակարգային ներազդեցությամբ: Այսօր համարյա բոլոր պետությունները լավ են ըմբռնում, որ այլ երկրների հաշվին որևէ պետության համար առավել անվտանգ պայմանների ստեղծումը անհնարին է: Նույնիսկ առանձին, լոկալ ուժի գործադրումը կարող է հանգեցնել այն կիրառող պետության տնտեսական կամ քաղաքական ինքնուրույնության թուլացմանը (Իրաք, Հարավսլավիա, Աֆղանստան): Պատահական չէ, որ որոշ հետազոտողների կարծիքով պետության անվտանգության ապահովումը ազգային-պետական բնագավառից տեղափոխվել է միջազգային ասպարեզ:

---

[7] Экономическая и национальная безопасность, էջ 33:

[8] Общая теория национальной безопасности, էջ 28-29: